

18.07.2013

ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի հուլիսի 16-ի նիստի օրակարգում դրված էր ԼՂՀ ԿԸՅ Նախագահի ընտրության մասին հարցը: Բացելով նիստը՝ ԼՂՀ ԿԸՅ Նախագահի տեղակալ Եղիշե Արզումանյանը նշեց, որ Արցախի Հանրապետության Նախագահի 2013թ. հուլիսի 9-ի հրամանագրով վաղաժամկետ դադարեցվել են ԼՂՀ ԿԸՅ Նախագահ, ԿԸՅ անդամ Ռաշիդ Պետրոսյանի լիազորությունները՝ իր դիմումի համաձայն:

Ե. Արզումանյանի իրազեկմամբ՝ հանրապետության Նախագահի հուլիսի 15-ի հրամանագրով ԿԸՅ անդամ է նշանակվել ԼՂՀ վարչապետի վերահսկողության ծառայության պետ Սրբուհի Գրիգորիի Արզումանյանը: Ուստի, ինչպես ասաց Ե. Արզումանյանը, անհրաժեշտ է ԿԸՅ կազմից ընտրել հանձնաժողովի Նախագահ:

ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ Բորիս Ալավերդյանն այդ պաշտոնի համար առաջարկեց Նորանշանակ անդամ Սրբուհի Արզումանյանի թեկնածությունը՝ միաժամանակ ներկայացնելով նրա կենսագրությունը:



Բաց քվեարկությամբ միաձայն ԼՂՀ ԿԸՅ Նախագահ ընտրվեց Սրբուհի Արզումանյանը:

Ներկաների անունից շնորհավորելով հանձնաժողովի նորընտիր Նախագահին՝ Եղիշե Արզումանյանը նրան մաղթեց հաջողություններ կարևոր և պատասխանատու այդ գործում՝ հույս հայտնելով, որ Սրբուհի Արզումանյանն, ինչպես աշխատանքի մյուս բնագավառներում, այստեղ ևս իրեն լիովին կարողարացնի:

Շնորհակալություն հայտնելով վստահության համար՝ Ս. Արզումանյանը մասնավորապես ասաց. 'Յուսով եմ ու նաև համոզված, որ համատեղ աշխատանքի արդյունքում ոչ միայն կպահպանենք համակարգում ձևավորված լավ ավանդույթները, այլև կօգտագործենք աշխարհում ընդունված առաջավոր փորձը, նորամուծությունները, նոր գաղափարները: ԼՂՀ ընտրական համակարգի հիմնական խնդիրը եղել և մնում է ընտրական գործընթացում քաղաքացիների ընտրական իրավունքների ապահովումն ու պահպանումը և այս համատեքստում մեր հանրապետության միջազգային վարկանիշը պահպանելու խնդիրը':

Լաուրա ԳՐԻԳՈՐՅԱՆ